ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. III

21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ

DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:
Challenges and Opportunities of 21st Century

РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:
вызовы и возможности 21-ого века

ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ

2017 թ., նոյեմբերի 22-24

Երևան 2018

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65
Տ 778

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհրդի նախագահ՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր

Խմբագրական խորհուրդ՝

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ - *ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., դոցենտ*
ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ - *ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ - *ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տ.գ.դ., պրոֆեսոր*
ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, տ.գ.թ., դոցենտ*
ԱՇՈՏ ՍԱԼՆԱԶԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ - *ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր*
ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ - *ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., տ.գ.դ., պրոֆեսոր*
ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ - *ՀՊՏՀ պրոռեկտոր, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և
Տ 778 **հնարավորություններ**: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ, 2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՝ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրատապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հետազոտական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այստեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հետազոտություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահետազոտական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հետագա գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մաղթում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

ԿԱՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ՀՊՏՀ ԳՄ
ՂԱՐԻԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դասախոս,
ՀՊՏՀ ԳՄ

ԳՅՈՒՄՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հիմնաբառեր. *ներդրումային միջավայր, գործոնային վերլուծություն, ոլորտի կարևորություն, գործարար հատված, ենթակառուցվածքներ, ինտեգրալային ցուցանիշ*

Հոդվածի հեղինակները, հիմնվելով ներդրումային միջավայրի գնահատման միջազգային փորձի և փորձագիտական գնահատականների վրա, մշակել են քաղաքների ներդրումային միջավայրը բնութագրող 22 որակական և 42 քանակական ցուցանիշներից կազմված համակարգ: Ընտրված մեթոդաբանությամբ, որակական և քանակական ցուցանիշների միջոցով, իրականացվել է ներդրումային միջավայրի ոլորտների և բոլոր ցուցանիշների կարևորության գնահատում: Կատարվել է Երևան և Գյումրի քաղաքների ներդրումային միջավայրերի գնահատում 7 ոլորտներում: Ներդրումային միջավայրը բնութագրող 64 ցուցանիշների համադրմամբ հաշվարկվել է ինտեգրալային ցուցանիշ և կատարվել 2 քաղաքների համեմատական վերլուծություն՝ ըստ այդ ցուցանիշի:

Հիմնվելով ներդրումային միջավայրի գնահատման միջազգային փորձի և փորձագետների գնահատականների վրա, մեր կողմից մշակվել է ՀՀ 2 քաղաքների ներդրումային միջավայրը բնութագրող ցուցանիշների համակարգ: Ներդրումային միջավայրի գնահատման համար ընտրված ցուցանիշների բաժանվում են երկու խմբի՝ 22 որակական և 42 քանակական:

Որակական ցուցանիշների գնահատման համար ընտրվել է փորձագիտական-բալային մեթոդը. ընտրված 15 փորձագետներ[1] 10 բալայինսանդղակով գնահատել են ներդրումային միջավայրին վերաբերող ցուցանիշները Գյումրի և Երևան քաղաքների համար, ինչպես նաև Հայաստանի ներդրումային միջավայրը գնահատող 22 ցուցանիշներ: Փորձագետները, բացի որակական ցուցանիշների գնահատումից, իրականացրել են նաև ներդրումային միջավայրը գնահատող՝ ընտրված ոլորտների և բոլոր ցուցանիշների կա-

[1] Փորձագետների ընտրությունն իրականացվել է բիզնես ոլորտի նեկայացուցչականություն ապահովելու սկզբունքի հիման վրա՝ 1 ներկայացուցիչ գործող փոքր, 1 ներկայացուցիչ՝ խոշոր բիզնեսից, 1-ական ներկայացուցիչներ Գյումրու քաղաքապետարանից և Շիրակի մարզպետարանից, 1 ներկայացուցիչ Գյումրու տեխնոլոգիական կենտրոնից, 3 ներկայացուցիչ բիզնես աջակցությամբ զբաղվող կազմակերպություններից, 3 ներկայացուցիչ բիզնես խորհրդատվությամբ զբաղվող կազմակերպությունից, 4 ներկայացուցիչ ակադեմիական հատվածից՝ 3 տնտեսագիտության թեկնածու և մեկ ասպիրանտ:

րևորության գնահատում. նախ՝ գնահատվել է վերը նշված բաժինների մեջ ցուցանիշների կարևորությունը միմյանց նկատմամբ, այնուհետև գնահատվել է բաժինների կարևորության աստիճանը միմյանց նկատմամբ:

Աղյուսակ 1

Փորձագիտական խմբի կողմից ոլորտների կարևորության գնահատման միջինացված ցուցանիշներ

Ոլորտ	*Կարևորություն*
Տնտեսություն	**8.357**
Ենթակառուցվածքներ և ինստիտուտներ	**8.5**
Գիտություն, տեխնոլոգիա, նորարարություն	**8.285**
Գործարար հատված	**8.928**
Ժողովրդագրություն, աշխատանքային ռեսուրսներ, կրթություն	**7.785**
Առողջապահություն, անվտանգություն և պաշտպանություն	**7.142**
Բնական ռեսուրսներ, շրջակա միջավայր	**6**
Կենսամակարդակ և սոցիալական պաշտպանություն	**7.071**

Ինչպես երևում է աղյուսակից, փորձագետները միջինացված ցուցանիշներով ներդրումային միջավայրի գնահատման առումով ամենամեծ կարևորությունը տվել են գործարար հատվածին, որի մեջ մտնում են այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են՝ *գրասենյակների վարձակալական վճար, ԱՁ-ների թվաքանակ, մեկ բնակչի հաշվով ընկերությունների կողմից վճարվող շահութահարկի և շրջանառության հարկի մեծություն, ՓՄՁ աջակցության խորհրդատվական և կրթական ծառայություններով բավարարվածություն, պետություն-մասնավոր հատված համագործակցությունից բավարարվածություն, ՓՄՁ-ներին ռեսուրսների հասանելիություն* և այլն:

Փորձագետների կողմից կարևորությամբ երկրորդ՝ 8.5 միավոր ստացել է «Ենթակառուցվածքներ և ինստիտուտներ» բաժինը, որի մեջ մտնում են այնպիսի կարևոր ցուցանիշներ, ինչպիսիք են՝ օդանավակայանի բեռնափոխադրումներ, ուղևորափոխադրումներ, մայրուղիների առկայություն, մանրածախ առևտրի օբյեկտներ, տուրիստական ընկերութուններ (հարկ է նշել, որ մեկ բնակչի հաշվով տուրիստական կազմակերպությունների Գյումրու ցուցանիշը էապես զիջում է Երևանի համանուն ցուցանիշին):

Հատկանշական է, որ ներդրումների ներգրավման տեսանկյունից փորձագետները գրեթե հավասար կարևորություն են տվել «տնտեսություն» և «գիտություն, տեխնոլոգիա և նորարարություն» բաժիններին: Այս առումով՝ նշենք, որ չնայած պետությունը մեկ շնչի հաշվով Գյումրու ՏՏ ոլորտի համար միքանի անգամ ավելի միջոցներ է ծախսել, քան Երևանում, սակայն, ըստ պաշտոնական վիճակագրության, մեկ շնչի հաշվով Գյումրիում ՏՏ ընկերությունների քանակը 2.5 անգամ քիչ է Երևանում գործող ընկերությունների քանակից, ՏՏ ոլորտում զբաղվածների թիվը մեկ շնչի հաշվով Գյումրիում Երևանից քիչ է 5.52 անգամ, իսկ մեկ շնչի հաշվով ծրագրավորման և ծառայությունների ոլորտի շրջանառությունը՝ 10,73 անգամ:

Փորձագետների կողմից կարևորության ամենացածր գնահատականը ստացել է «Բնական ռեսուրսներ և շրջակա միջավայր» բաժինը, որի մեջ ներառվում են «Աղտոտող

նյութերի արտանետումներ», «Օդի աղտոտման մակարդակ» և «Տարածքի սեյսմիկ կայունություն» ցուցանիշները:

Բաժնի կարևորությունից փորձագետների կողմից գնահատվել է նաև տվյալ բաժնի ցուցանիշիների կարևորությունը միմյանց նկատմամբ: Ինչպես արդեն նշել ենք, ներդրումային միջավայրի գնահատման համար միջազգային տարբեր կազմակերպություններ օգտագործում են ցուցանիշերի տարբեր համախումբ: Մեր կողմից ընտրված ցուցանիշների միջոցով հետազոտական թիմը փորձ է արել համեմատել Գյումրու և Երևանի ներդրումային միջավայրերը ըստ վերը նշված ցուցանիշների: Համեմատության համար կազմվել է ինտեգրալային ցուցանիշ, որը հաշվարկվում է Երևան և Գյումրի քաղաքների համար և դրանց հարաբերության միջոցով որոշվում է, թե մի քաղաքի ներդրումային գրավչությունը քանի անգամ է տարբերվում մյուսից, այսինքն՝ մեր կողմից փորձ է արվում հասկանալ, թե վերը նշված 64 ցուցանիշների համադրման արդյունքում որ քաղաքի ներդրումային միջավայրն է ավելի գրավիչ և ինչքանով: Դրա համար հետազոտական թիմի կողմից կազմվել է երկու քաղաքների ներդրումային միջավայրը բնութագրող ցուցանիշների հարաբերության շարք, որից հետո իրականացվել է ցուցանիշների նորմավորում, նորմավորումից հետո Երևան քաղաքի առավելություն ունեցող ցուցանիշների հանրագումարը հարաբերվել է Գյումրի քաղաքի առավելություն ունեցող ցուցանիշների հանրագումարին: Մեր կողմից իրականացվել է նաև տվյալ ցուցանիշների ճշգրտում՝ հաշվի առնելով բաժնի և դրա ներսում առանձին ցուցանիշների կարևորության գնահատականները՝ տրված փորձագետների կողմից, այսինքն՝ փորձագետների երկու գնահատականների հիման վրա յուրաքանչյուր ցուցանիշ ճշգրտվել է համապատասխան գործակցով, որից հետո կատարվել է վերը նշված ցուցանիշների հարաբերություն: Հատկանշական է, որ դիտարկված 64 ցուցանիշից 52-ում Երևան քաղաքնունիառավելություն, իսկ 12-ում՝ հակառակը: Բացի կշռված ցուցանիշից, մեր կողմից իրականացվել է ևս մեկ ճշգրտում՝ առանձնացվել են միջինից կրկնակի շեղում ունեցող ցուցանիշները և կատարվել լրացուցիչ վերլուծություն (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Միջինից կրկնակի շեղում ունեցող ցուցանիշներ

N	Ցուցանիշի անվանում	Միջին ցուցանիշից կրկնակի շեղում
1	Հայկական ծագում ունեցող ապրանքների արտահանումների քանակ	16.45412844
2	Օդանավակայանից բեռնափոխադրումների քանակ (տոննա)	32.61621235
3	Լիցենզավորվածտաքսիների քանակ	9.269714536
4	*Ծրագրավորման և ծառայությունների ոլորտի շրջանառություն*	10.72637352
5	*Գրանցված գործազուրկների քանակ*	6.716868799

«Հայկական ծագում ունեցող ապրանքների արտահանումների քանակ» ցուցանիշը վերաբերում էծագման սերտիֆիկատ պահանջող երկրներին: Քանի որ Հայաստանը ԵԱՏՄ անդամ է, խիստ կարևորվում է այլ երկրներ արտահանումների քանակը, ուստի այս ցուցանիշը մեր կողմից փոփոխության չի ենթարկվել:

Հաջորդ ցուցանիշը՝ «Օդանավակայանից բեռնափոխադրումների քանակ», 64 ցուցանիշի մեջ ամենամեծ տարբերությունն ունի և միջին տարբերությունից շեղված է մոտ 13 անգամ: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ցուցա-նիշի մեծ լինելը մեծապես պայմանավորված է Գյումրու օդանավակայանի բեռնատար ինքնաթիռների սպասարկման անհնարինությամբ: Հաշվի առնելով այս երկու հանգամանքը՝ այս գործոնը գնահատման ճշտված ցուցանիշի մեջ չի ներառվել:

Քանի որ մեր դիտարկումները և ուսումնասիրությունները փաստում են, որ Գյումրիում բազմաթիվ անհատներ տաքսի ծառայություն են մատուցում առանց լիցենզավորման առկայության, ուստի «լիցենզավորված տաքսիների քանակ» ցուցանիշի արժանահավատության և ոլորտի բնորոշման աստիճանը խիստ ցածր է և վերանայման կարիք ունի: Այլընտրանքային ցուցանիշ կարող է լինել տաքսի ծառայության մեկ կիլոմետրի արժեքը, քանի որ այս ցուցանիշը Գյումրիում և Երևանում համադրելի է, որոշվել է այս ցուցանիշների ազդեցությունը ևս չդիտարկել:

«Ծրագրավորման ծառայությունների ոլորտի և շրջանառության», «Գրանցված գործազուրկների» ցուցանիշները, լինելով ոլորտը բնութագրող բազային ցուցանիշներ, մեր կողմից ճշգրտման չեն ենթարկվել: Ի տարբերություն սկզբնական ցուցանիշի, ճշտված ինտեգրալային ցուցանիշը 64-ի փոխարենկազմված է 62 ցուցանիշի հիման վրա, քանի որ հանվել է վերը նշված երկու ցուցանիշը:

Այսպիսով՝ մեր կողմից երկու քաղաքների ներդրումային միջավայրերը բնութագրող ինտեգրալային ցուցանիշների հարաբերությունը հաշվարկվել է չորս տարբերակով. առաջին՝ հիմնվելով 64 ընտրված ցուցանիշների վրա, երկրորդ՝ 64 ցուցանիշում կատարելով փորձագետների կողմից տրված կարևորության ճշգրտումը, երրորդ՝ ճշգրտված 62 ցուցանիշով (առանձնացնելով ամենամեծ շեղում գրանցած ցուցանիշները) և չորրորդ՝ ճշգրտված ցուցանիշի և փորձագետների կողմից սահմանած կարևորությունը հաշվի առնելով: Հետազոտական թիմի կողմից, որպես հետազոտության հիմնական արդյունք, դիտարկվում է չորրորդ սկզբունքով հաշվարկված ցուցանիշը: Արդյունքներն արտացոլվել են աղյուսակ 3-ում:

Ինչպես երևում է աղյուսակից, Երևանի ներդրումային միջավայրը բնութագրող 64 ցուցանիշով հաշվարկված ինտեգրալային ցուցանիշը 2.71 անգամ գերազանցում է Գյումրի քաղաքի ինտեգրալային ցուցանիշը: Հատկանշական է, որ միայն 42 քանակական ցուցանիշների հիման վրա հաշվարկված Գյումրու ներդրումային գրավչության ինտեգրալային ցուցանիշը Երևանին զիջում է 3.35 անգամ, իսկ միայն 22 որակական ցուցանիշներով ինտեգրալային ցուցանիշը՝ 1.37 անգամ: Սա նշանակում է, որ փորձագետների կողմից ներդրումային միջավայրը բնութագրող ցուցանիշների հարաբերությունը Գյումրի և Երևան քաղաքներում էապես զիջում է նույն քաղաքներում ներդրումային միջավայրը բնութագրող քանակական ցուցանիշների հարաբերությանը: Աղյուսակից նաև երևում է, որ ներդրումային միջավայրի հարաբերական գնահատականը Երևան և Գյումրի քաղաքներում, հաշվի առնելով յուրաքանչյուր ցուցանիշի՝ փորձագետների կողմից տրված կշիռները, նույնպես տարբերվում է դրա պարզ միջին ցուցանիշից՝ 2.679՝ 2.71-ի փոխարեն:

Աղյուսակ 3

Երևան և Գյումրի քաղաքների ներդրումային միջավայրը բնութագրող ինտեգրալային ցուցանիշների հարաբերություն

	Ներդրումային միջավայրերի հարաբերական ցուցանիշ	*Ներդրումային միջավայրերի հարաբերական ցուցանիշ՝ 42 քանակական ցուցանիշներով հաշվարկված*	*Ներդրումային միջավայրի համեմատական ցուցանիշ՝ 22 որակական ցուցանիշներով հաշվարկված*	*Երևանի և Գյումրու միջին առավելությունների հարաբերություն*
Պարզ միջին 64 ցուցանիշ	2.710028615	***3.346070365***	1.366251	2.430695827
Կշռված միջին 64 ցուցանիշ	2.679535814	***3.232349143***	1.538707	2.52636984
Պարզ միջին 62 ցուցանիշ	2.161503298	***2.55484013***	1.366251	1.917928133
Կշռված միջին 62 ցուցանիշ	2.201820182	***2.546828104***	1.521714	2.060301375

Հարկ է նշել, որ ամենամեծ տարբերությունն առաջացել է ցուցանիշների ճշգրտման ժամանակ. 2.71, 2.68 ցուցանիշների փոխարեն՝ ճշգրտված ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 2.16, 2.2: Հետազոտական թիմի կողմից երկու քաղաքների ներդրումային միջավայրերի համեմատական վերջնական ցուցանիշ ընտրվել է փորձագետների կողմից ցուցանիշների կարևորությամբվերանայված ցուցանիշներով ճշգրտված ցուցանիշը՝ 2.2: Սա նշանակում է, որ Երևանի ներդրումային միջավայրը 2.2 անգամ ավելի բարվոք է, քան Գյումրի քաղաքում, միայն քանակական ցուցանիշներով այն կազմում է 2.55, իսկ միայն որակական ցուցանիշներով՝ 1.5:

Մեր կողմից նաև գնահատվել է Գյումրու՝ Երևանի նկատմամբ առավելություն ունեցող 12 և Երևանի՝ Գյումրու նկատմամբ առավելություն ունեցող 52 ցուցանիշների միջին առավելության ցունանիշներ, որոնք համապատասխանաբար կազմում են 1.28, 2.64: Սա նշանակում է, որ Երևանի ցուցանիշների առավելությունը Գյումրու համանման ցուցանիշների նկատմամբ 2.06 անգամ ավելի է Երևանի ցուցանիշների նկատմամբ Գյումրու ցուցանիշների առավելությունից:

Բացի վերոնշյալ միջին առավելությունը բնութագրող ցուցանիշից, ներդրումային միջավայրի համեմատումը Երևան և Գյումրի քաղաքներում մեր կողմից իրականացվել է նաև ըստ յուրաքանչյուր բաժնի, այսինքն՝ հաշվարկվել է, թե յուրաքանչյուր բաժնում քանի անգամ է ներդրումային միջավայրը Երևան քաղաքում բարվոք Գյումրուց, կամ հակառակը (աղյուսակ 4): Այս ցուցանիշների հաշվարկը նույնպես կատարվել է բազային ցուցանիշներով և ճշգրտումներով:

Հարկ է նշել, որ ճշգրտված երկու ցուցանիշներն էլ «Ենթակառուցվածքներ և ինստիտուտներ» ոլորտից են, որի պատճառով ոլորտի ճշգրտված ցուցանիշը մոտ երկու անգամ տարբերվում է բազային միջին ցուցանիշից: Այդուհանդերձ, ինչպես ընդհանուր, այնպես էլ ոլորտային գնահատման մեջ հետազոտական թիմի կողմից որոշում է կայաց-

վել հետազոտության համար հիմք ընդունել վերջնական ճշգրտված ցուցանիշը՝ վերանայված ցուցանիշներով և փորձագետների կարևորության գնահատականով:

Աղյուսակ 4

Ըստ բաժինների՝ Երևան և Գյումրի քաղաքների ներդրումային միջավայրը բնութագրող ինտեգրալային ցուցանիշների հարաբերություն

N	Ոլորտ	Միջին	Միջին կշռված	Ճշգրտված 62 ցուցանիշ	Ճշգրտված կշռված
1	Տնտեսություն	3.467950567	3.552439172	3.467950567	3.555356069
2	Ենթակառուցվածքներ և ինստիտուտներ	3.848257465	3.697850381	1.738739048	1.840474051
3	Գիտություն, տեխնոլոգիա, նորարարություն	3.255720937	3.258430246	3.255720937	3.260943026
4	Գործարար հատված	1.215273999	1.233019749	1.215273999	1.233531872
5	Ժողովրդագրություն, աշխատանքային ռեսուրսներ, կրթություն	2.505508608	2.368847711	2.505508608	2.370002417
6	Առողջապահություն, անվտանգություն և պաշտպանություն	1.018539088	1.086189133	1.018539088	1.085927044
7	Բնական ռեսուրսներ, շրջակա միջավայր	0.948352307	0.886421903	0.948352307	0.886645945

Ինչպես երևում է աղյուսակից, Գյումրու ներդրումային միջավայրն ամենաշատը 3.55 անգամ զիջում է Երևանին«Տնտեսություն» բաժնի ցուցանիշներով, որն ընդհանուր միջին ցուցանիշից բարձր է 1.73 անգամ: Հատկանշական է, որ չնայած Գյումրին տեխնոլոգիական և գիտատար քաղաք դարձնելը համարվում է ՀՀ կառավարության առաջնահերթություններից մեկը, սակայն այս ոլորտում ներդրումային միջավայրը գնահատող միջին ցուցանիշը Երևանին զիջում է 3.26 անգամ: «Գործարար հատված» բաժինն ընդհանուր միջինիցպակաս է 1.67 անգամ, ավելին՝ այս բաժնի ցուցանիշները Գյումրի և Երևան քաղաքներում իրար շատ մոտ են, որը, մեր կարծիքով, հիմնականում պայմանավորված է մարդկային գործոնով՝ Գյումրի քաղաքում գործարար հատվածի ակտիվ գործունեությամբ: Ներդրումային միջավայրի գրեթե հավասար ցուցանիշներ են արձանագրվել «Առողջապահություն, անվտանգություն և պաշտպանություն» բաժնում: Միակ ոլորտը, որտեղ Գյումրու ներդրումային միջավայրն ավելի բարվոք է, «Բնական ռեսուրսներ, շրջակա միջավայր» բաժինն է՝ 1.12 անգամ:

КАРЕН ПЕТРОСЯН
ГАРИБ АРУТЮНЯН

СРАВНИТЕЛЬНАЯ ОЦЕНКА ИНВЕСТИЦИОННОЙ СРЕДЫ В ГЮМРИ И ЕРЕВАНЕ

Ключевые слова: *инвестиционная среда, факторный анализ, важности показателей, бизнес-сектор, инфраструктура, интегральный показатель*

Авторы статьи, основываясь на международном опыте оценки инвестиционной среды и экспертной оценки, разработали систему, состоящую из 22 качественных и 42 количествен-

ных показателей, описывающих инвестиционную среду городов. Посредством данной методологии, с помощью оценки качественных и количественных показателей, была осуществлена оценка инвестиционной среды и важности всех показателей. Была проведена оценка инвестиционной среды в 7 сферах городов Гюмри и Еревана. В сопоставлении 64 показателей, на их основе был рассчитан интегральный показатель и проведен сравнительный анализ на основании данного показателя.

KAREN PETROSYAN
GHARIB HARUTYUNYAN

COMPARATIVE ASSESSMENT OF INVESTMENT CLIMATE IN GYUMRI AND YEREVAN

Key words: *investment climate, factor analyze, significance of sector, business field, infrastructures, integral indicator*

Based on the international experience of investment climate assessment and expert assessments, the authors developed a system of 22 qualitative and 42 quantitative indicators characterizing city investment climate. Assessment of the significance of sectors and all the indicators ofthe investment climate through qualitative and quantitative indicators by selected methodology was realized. Assessment of investment climates in Yerevan and Gyumri cities has been implemented in 7 spheres. Compared to the 64 indicators characterizing the investment climate, 64 indicators were calculated using an integral indicator and a comparative analysis of 2 cities was realized according to that indicator.

ԱՇՈՏ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի
կրտսեր հետազոտող,
տնտեսագիտության թեկնածու

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հիմնաբառեր. *հիփոթեքային շուկա, բանկային համակարգ, առևտրային բանկեր, տնտեսական աճ, ծրագրային վարկեր, կանխավճար*

Հիփոթեքային շուկան ամբողջ աշխարհում ունի իր ուրույն դերը երկիր տնտեսության զարգացման մեջ: Այս շուկան մշտապես գտնվում է հետազոտողների ուշադրության կենտրոնում, և այդ է պատճառը, որ այս շուկայում օրեցօր ավելանում են նոր գործիքներ և մեխանիզմներ, որոնք դյուրացնում են հիփոթեքի տրամադրումը: Հիփոթեքային շուկայի զարգացումը կնպաստի անշարժ գույքի շուկայի առաջընթացին, շինարարության ծավալների ընդլայմանը, տնտեսական աճի կայունացմանն ու բարձրացմանը և, իհարկե, նոր աշխատատեղերի ստեղծմանը: